

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԱԶԳԱՅԻՆ ԺՈՂՈՎԻ ՆԱԽԱԳԱՀ
պարոն ՀՈՎԻԿ ԱԲՐԱՀԱՄՅԱՆԻՆ

Հարգելի պարոն Աբրահամյան

Ձեզ ենք ներկայացնում Հայաստանի Հանրապետության կառավարության եզրակացությունը Հայաստանի Հանրապետության Ազգային ժողովի պատգամավորներ Հովհաննես Մարգարյանի և Հեղինե Բիշարյանի՝ օրենսդրական նախաձեռնության կարգով ներկայացրած «Բնակչության բժշկական օգնության և սպասարկման մասին Հայաստանի Հանրապետության օրենքում փոփոխություն կատարելու մասին Հայաստանի Հանրապետության օրենքի նախագծի վերաբերյալ:

Հայաստանի Հանրապետության քաղաքացի չհանդիսացող՝ ազգությամբ հայերին անվճար բժշկական օգնություն և սպասարկում տրամադրելու վերաբերյալ դրույթները չեն բխում Հայաստանի Հանրապետության Մահմանադրության 14.1-ին հոդվածից: Հարկ ենք համարում նշել, որ այլ պետության քաղաքացիների բժշկական օգնությունը և սպասարկումը Հայաստանի Հանրապետությունում իրականացվում է միջազգային պայմանագրերի հիման վրա, իսկ բոլոր անհետաձգելի դեպքերում բուժօգնությունն իրականացվում է պետական պատվերի շրջանակներում: Այդուհանդերձ, Հայաստանի Հանրապետության առողջապահության նախարարի 2009 թվականի դեկտեմբերի 12-ի N 1991-Ա հրամանով հաստատված մանկաբարձագինեկոլոգիական բուժօգնության չափորոշի համաձայն, Հայաստանի Հանրապետության քաղաքացի չհանդիսացող, սակայն Հայաստանի Հանրապետության քաղաքացու հետ գրանցված ամուսնության մեջ գտնվող կանանց մանկաբարձագինեկոլոգիական բուժօգնությունը ևս իրականացվում է պետական պատվերի շրջանակներում: Բացի դրանից, նշված չափորոշչով, համապատասխան իրավասու մարմինների ուղեգրերով և անհրաժեշտ հիմքերի առկայության դեպքում նախատեսվում է նաև պետական պատվերի շրջանակներում մանկաբարձագինեկոլոգիական բուժօգնության տրամադրում Հայաստանի Հանրապետության քաղաքացու հետ չգրանցված (փաստացի) ամուսնության մեջ գտնվող օտարերկրյա քաղաքացի կանանց, ինչպես նաև Հայաստանի Հանրապետության քաղաքացի չհանդիսացող, սակայն Հայաստանի Հանրապետությունում մշտապես բնակվող կանանց համար:

Նույն չափորոշիչի 6-րդ կետով նախատեսվում է նաև համապատասխան իրավասու մարմինների ուղեգրերով Լեռնային Ղարաբաղի Հանրապետության և ՎրաստանիԾ հայաբնակ Ջավախքի տարածաշրջանի բնակիչների անվճար մանկաբարձագինեկոլոգիական բուժօգնության տրամադրում:

Հարկ ենք համարում նշել նաև, որ «Բնակչության բժշկական օգնության և սպասարկման մասին Հայաստանի Հանրապետության օրենքով, Հայաստանի Հանրապետության կառավարության 2004 թվականի մարտի 4-ի «Պետության կողմից երաշխավորված անվճար բժշկական օգնության և սպասարկման մասին N 318-Ն որոշմամբ և պետության կողմից երաշխավորված անվճար բժշկական օգնության և սպասարկման չափորոշիչներով արդեն իսկ երաշխավորված է կանանց՝ հղիության, ծննդաբերության և հետծննդյան շրջանում անվճար բուժօգնություն ստանալու իրավունքը:

Ինչ վերաբերում է նախագծի «գե կետով յուրաքանչյուրին վերապահված «իր հայեցողությամբ բժշկական հաստատությունը և բժշկինե ընտրելու մասին դրույթներին, ապա դրանք ընդունելի չեն, քանի որ հղիության նախածննդյան հսկողությունը (արտահիվանդանոցային մանկաբարձագինեկոլոգիական բժշկական) իրականացվում է տարածքային սկզբունքով, և այդ սկզբունքի համաձայն կինը՝ իր բնակության վարչատարածքային միավորի սահմաններում գործող բժշկական հաստատություններից ցանկացածում, որն ունի մանկաբարձագինեկոլոգիական բժշկական օգնության և սպասարկման լիցենզիա, իրավունք ունի ընտրելու իրեն սպասարկող բժիշկ-գինեկոլոգին: Այս առումով առաջարկվող ազատ ընտրության առավել լայն շրջանակ տրամադրելը չի կարող երաշխավորել հղիների պատշաճ հսկողությունը: Այսպես, օրինակ, Վայոց ձորի մարզում բնակվող հղիին առաջարկվող ազատ ընտրության պարագայում Երևան քաղաքի բուժհաստատությունում հսկվելու դեպքում առաջանալու են խնդիրներԾ կապված պատրոնաժ աշխատանքների, հեռավորության, ժամանակատարության և այլնի հետ, ինչը կարող է անդրադառնալ հսկվող հղիին տրամադրվող բժշկական օգնության որակի և ծավալի վրա: Միաժամանակ տարածքային սկզբունքով հղիների սպասարկումը ենթադրում է բժշկի ազատ ընտրություն՝ տվյալ վարչատարածքային միավորի սահմաններում:

Ելնելով շարադրվածից, ինչպես նաև հաշվի առնելով այն, որ ներկայացված նախագծի ընդունումը կառաջացնի լրացուցիչ բյուջետային միջոցների հատկացման անհրաժեշտություն, Հայաստանի Հանրապետության կառավարությունը դեմ է օրենքի նախագծի ընդունմանը:

Միաժամանակ հայտնում ենք, որ, ներկայացված օրենքի նախագիծը Հայաստանի Հանրապետության Ազգային ժողովում քննարկելիս, հարակից գեկուցմամբ հանդես կգա Հայաստանի Հանրապետության առողջապահության նախարարի տեղակալ Ալեքսանդր Ղուկասյանը:

Հարգանքով՝

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՕՐԵՆՔԸ**

**«Բնակչության բժշկական օգնության եւ սպասարկման մասին եւ Հայաստանի
Հանրապետության օրենքում փոփոխություն կատարելու մասին**

Հոդված 1. «Բնակչության բժշկական օգնության եւ սպասարկման մասին Հայաստանի Հանրապետության 1996 թվականի մարտի 4-ի ՀՕ-42 օրենքի 9-րդ հոդվածի 1-ին մասի «գ» կետը շարադրել հետևյալ խմբագրությամբ.

«գ) հղիության ամբողջ ընթացքում, ծննդաբերության ժամանակ եւ հետծննդյան շրջանում ստանալ հղիության, ծննդաբերության եւ հետծննդյան խնամքի հետ կապված բժշկական օգնություն եւ սպասարկում՝ իր հայեցողությամբ ընտրելով բժշկական հաստատությունը եւ բժշկին: Պետության կողմից երաշխավորված ամենամյա առողջապահական նպատակային ծրագրերի շրջանակներում Հայաստանի Հանրապետության քաղաքացիներին եւ Հայաստանի Հանրապետության քաղաքացի չհանդիսացող ազգությամբ հայերին սույն կետով նախատեսված բժշկական օգնությունը եւ սպասարկումը Հայաստանի Հանրապետությունում տրամադրվում են անվճար, որի իրականացման կարգը եւ պայմանները սահմանում է Հայաստանի Հանրապետության կառավարությունը:»:

Հոդված 2. Սույն օրենքն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակմանը հաջորդող տասներորդ օրը:

ՀԻՄՆԱՎՈՐՈՒՄ

**«Բնակչության բժշկական օգնության եւ սպասարկման մասին Հայաստանի
Հանրապետության օրենքում փոփոխություն կատարելու մասին ՀՀ օրենքի ընդունման
անհրաժեշտության**

Ըստ վիճակագրական տվյալների՝ Հայաստանում 1990 թ.-ին ծնվել է շուրջ 80 հազար երեխա, 2005-2006 թվականներին՝ շուրջ 37,5 հազար երեխա, 2007թ.-ին՝ 40 հազար, իսկ 2009թ.-ին այդ ցուցանիշն աճել է շուրջ 45 հազարի: Կարելի է ենթադրել, որ 2009 թ.-ին ծնունդների թվի աճի համար խթան է հանդիսացել նաեւ 2008 թվականից Հայաստանի Հանրապետությունում տրամադրվող անվճար ծննդօգնությունը:

Պետք է նկատել, սակայն, որ նշված արտոնությունից օգտվելու հնարավորություն ունեն միայն ՀՀ քաղաքացիները, հետեւաբար ազգությամբ հայ օտարերկրյա քաղաքացիների եւ քաղաքացիություն չունեցող անձանց ծննդօգնության տրամադրումը Հայաստանի Հանրապետությունում վճարովի է: Ի դեպ, տարեկան Հայաստանի Հանրապետությունում ծննդաբերում են հարեւան պետությունների քաղաքացիներ հանդիսացող շուրջ 300 հայուհիներ՝ հիմնականում Ռուսաստանի Դաշնությունից եւ Ջավախքից:

Կարծում ենք, ժամանակն է հասել օրենսդրորեն ամրագրել Հայաստանի
Հանրապետությունում հայ կնոջ անվճար ծննդօգնություն ստանալու իրավունքը, ինչը
կարող է նպաստել նաև Հայաստանի Հանրապետություն ներգաղթի աճին: